ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի

թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա.Գյուլումյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա.Պետրոսյանի

Քննության առնելով Վարուժան Ավետիսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վարուժան Ավետիսյանը (ներկայացուցիչ՝Տաթևիկ Սիրադեղյան) 06.06.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան խնդրելով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքին այնքանով, որքանով զրկում է դատավարության կողմերին իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու իրավունքից:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանափակել է դատավարության մասնակից հանդիսացող դիմողի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը՝ հնարավորություն չտալով իրացնել դատարանի՝ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտը բողոքարկելու իր սահմանադրական իրավունքը: Նշելով, որ ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ գլխի դրույթների շրջանակներում հատուկ վարույթի կարգով քննության է առնում անձանց սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի՝ հավաքների ազատության իրավունքի իրացման արգելքի կամ սահմանափակման իրավաչափությունը, դիմողը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթը ոչ միայն զրկում է անձին դատարանի ոչ արդարացի դատական ակտը բողոքարկելու իրավունքից, այլև՝ ստորադաս դատարանի հնարավոր ոչ արդարացի դատական ակտով իր խախտված կամ սահմանափակված իրավունքի վերականգնման հնարավորությունից:

3. Վարուժան Ավետիսյանի անհատական դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Վարուժան Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:
2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հունիսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-19